



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

№ 5/07.1/51884

« 07 » 2019թ.

«Հետաքննող լրագրողներ» հ/կ-ի նախագահ
«Հետք» թերթի խմբագիր
պարոն Է. Բաղդասարյանին

Հարգելի պարոն Բաղդասարյան

Ի պատասխան Ձեր 2019թ. հուլիսի 4-ի գրության հայտնում եմ, որ «Արմենիա Քամփըր Փրոգրամ» ընկերության կողմից ներկայացված Թեղուտի լեռնահարստացման կոմբինատի և պղնձամոլիբդենային հանքավայրի 1-ին հերթի շահագործման աշխատանքային նախագծի վերաբերյալ 07.11.2006թ. տրամադրվել է դրական փորձաքննական եզրակացություն ԲՓ-135:

Համաձայն ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում լիազոր մարմնի՝ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տեղեկատվության /www.minenergy.am/page/422/, Թեղուտի պղնձ-մոլիբդենային հանքավայրի արդյունահանման նպատակով «Թեղուտ» ՓԲ ընկերությանը տրամադրված N ՇԱԹՎ-29/376 թույլտվության գործողության ժամկետը սահմանված է մինչև 2026 թվականի փետրվարի 8-ը:

Ձեր գրությամբ նշված կազմակերպությունների կողմից կատարված ուսումնասիրությունների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվել են լիազոր մարմին:

Շրջակա միջավայրի նախարարությանը պոչամբարի շահագործման թույլտվության տրամադրման իրավասություններ վերապահված չեն: Պոչամբարների պատվարների անվտանգության հարցերով լիազոր մարմինը տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային պետական կոմիտեն է:

Հարգանքով
պաշտոնակատար

7/22/2019


Վ. Զիլավյան

X

ՎԱՇԵ ԶԻԼԱՎՅԱՆ

Signed by: JILAVYAN VAHE 4101750076

ՏՀՀԿՎ
Ա.Սուքիասյան
011-818-559



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

0010, ք.Երևան, Հանրապետության հր., Կառավարական տուն 3
10010608@e-citizen.am | min_ecology@mnp.am | www.mnp.am
(+374) 11 818-520 | Fax: (+374) 11 818-506